ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2013 թվականի N 131 Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին գումար հատկացնելու, գույք հանձնելու, «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 303-Ն որոշման պահանջների, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին հատկացված միջոցներով կառուցված՝ 475,276,235 դրամ հաշվեկշռային արժեքով «Գորիս քաղաքի և գյուղերի ջրամատակարարման վերակառուցում Զույգաղբյուրի (Կոշաբուլաղի) աղբյուրների միջոցով» (ՆԿ000+00-ից ՆԿ103+70) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի N 309-Ն որոշմամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ 255,812,185 դրամ հաշվեկշռային արժեքով «Գորիս քաղաքի և հարակից գյուղերի վերակառուցված ջրատար» (ՆԿ103+70-ից ՆԿ180+45) միացյալ գույքը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

- Ա. Ուստաբաշյան – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
- Ա. Մարդյան - ՀՀ Սյունիքի մարզի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
- Ա. Խաչատրյան - ՀՀ Սյունիքի մարզի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ
- Մ. Կոստանդյան - ՀՀ Սյունիքի մարզի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման – մարզային հողային պետական տեսչության բաժնի պետ
- Կ. Միրաքյան – կապալառու կազմակերպության նախագահ /համաձայնությամբ/

- Վ. Առաքելյան – <<Վ. Առաքելյան>> ՍՊԸ-ի տնօրեն /համաձայնությամբ/
- Ս. Թառյան – նախագծային ինստիտուտի գլխավոր ինժեներ /համաձայնությամբ/
- Է. Մխիթարյան – ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ/համաձայնությամբ/
- Ս. Ադամյան - <Հայջրմուղկոյուղի> ՓԲԸ-ի գույքի կառավարման վարչության պետ /համաձայնությամբ/
- Ա. Սարգսյան - <Հայջրմուղկոյուղի> ՓԲԸ <Հարավային> տարածքային մասնաճյուղի փոխտնօրեն /համաձայնությամբ/
- Վ. Ադունց - <Հայջրմուղկոյուղի> ՓԲԸ <Հարավային> տարածքային մասնաճյուղի <Գորիս> տեղամասի պետ /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին՝ ապահովել սույն որոշման առաջին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:
3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2013թ. սեպտեմբերի 13
ք. Կապան